

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

14.09.2007թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Վ.Դանիելյանը, Յու. Պողոսյանը, Վ. Դավթյանը, Ա. Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական Ջ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Գ. Գյուրջյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տրանսպորտի և կապի բաժնի պետ Գ. Թորոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի գլխավոր մասնագետ Ա.Գյուլբենկյանը:

Նիստում լավեցին հետևյալ հարցերը.

1. «Ավտոմոբիլային տրանսպորտի արտադրանքի և շարժակազմի մասին» ձև թիվ 1-ԱՎՏՈ (ամսական),

- «Երկաթուղային տրանսպորտի աշխատանքի մասին» ձև թիվ 2-ԵՐԿԱԹ (ամսական),
- «Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի աշխատանքի մասին» ձև թիվ 65-ԵՐԿԱԹ (տարեկան)
- «Օդային տրանսպորտի աշխատանքի մասին» ձև թիվ 1-ԱՎԻԱ (ամսական),
- «Ընդհանուր օգտագործման օդային տրանսպորտի Հայաստանյան շարժակազմի արտադրանքի մասին» ձև թիվ 65-ԱՎԻԱ (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվությունները և դրանց լրացման հրահանգները ՀՀ Վիճակագրական պետական խորհրդի որոշումով հաստատելու վերաբերյալ» հարցը:

/Ձեկուցող՝ Գ. Թորոսյան/

Որոշեցին՝

Հաստատել

- «Ավտոմոբիլային տրանսպորտի արտադրանքի և շարժակազմի մասին» ձև թիվ 1-ԱՎՏՈ (ամսական),
- «Երկաթուղային տրանսպորտի աշխատանքի մասին» ձև թիվ 2-ԵՐԿԱԹ (ամսական),
- «Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի աշխատանքի մասին» ձև թիվ 65-ԵՐԿԱԹ (տարեկան)
- «Օդային տրանսպորտի աշխատանքի մասին» ձև թիվ 1-ԱՎԻԱ (ամսական),
- «Ընդհանուր օգտագործման օդային տրանսպորտի Հայաստանյան շարժակազմի արտադրանքի մասին» ձև թիվ 65-ԱՎԻԱ (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվությունները և դրանց լրացման հրահանգները:

/Նորմատիվ/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 1998-2005 թվականներին իրականացված տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանագրծված տվյալների բազաները Պռովո համալսարանից (ԱՄՆ) Քրիստոֆեր Պալմերին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ. Մարտիրոսովա/

Որոշեցին՝

Թույլատրել տրամադրել, «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 1998-2005 թվականներին իրականացված տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանագրծված տվյալների բազաները Պռովո համալսարանից (ԱՄՆ) Քրիստոֆեր Պալմերին գուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմանով:

/Անհատական/

3. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 23-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա. Պետրոսյան/

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 21-ի «2007 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 23-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. հավելված III-ի «1. Վիճակագրական ժողովածուներ» բաժնի «4400-101» և «4500-101» ծածկագրերի տողերում, հավելված X-ի «Վիճակագրական հրապարակումներ» բաժնի 31-րդ և 32-րդ տողերում, հավելված X-ի «Վիճակագրական հրապարակումների օրացույցը թեմատիկ ներկայացմամբ» բաժնի 39-րդ և 40-րդ տողերում՝ «III եռամսյակ» բառերը փոխել «IV եռամսյակ» բառերով:

/Նորմատիվ/

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

Հաղորդում Հնդկաստանի Նյու Դելի քաղաքում 06.08–10.08.2007թ. ՄԱԿ-ի Վիճակագրության Բաժանմունքի (Վարչության), Համաշխարհային Բանկի, ՄԱԿ-ի Չարգացման Ծրագրի և ՄԱԿ-ի Կանանց Չարգացման Հիմնադրամի հրավերով «Գեոդերային վիճակագրության արտադրություն» խորագրով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Ա. Գյուլբենկյան/

4.1. Հաղորդում Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բեռլին քաղաքում 02.09–07.09.2007թ. Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության անունից գերմանական «Միջազգային հզորությունների զարգացում» /ՄՀԶ՝ InWEnt/ կազմակերպության հրավերով «Շրջակա միջավայրի պահպանության գործողությունների ազգային ծրագրի նախապատրաստում և իրականացում Հայաստանի և Վրաստանի փորձը» թեմայով սեմինարին մասնակցության վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Յու. Պողոսյան/

Որոշեցին՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումները ընդունել ի գիտություն

/Անհատական/

12. 10. 2007թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Գևորգյանը, Գ.Անանյանը, Վ. Դավթյանը, Ա. Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ. Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ. Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Կարապետյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Գ. Սարգսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ռ. Վարդանյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ֆինանսների վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Զ. Պողոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Զ. Ավոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի Կոտայքի մարզային գործակալության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի պետ Մ. Ստեփանյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2006 թվականին իրականացված «Տնային տնտեսությունների կողմից առողջապահական ծառայությունների վրա կատարված ծախսերի վերաբերյալ» հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան Առողջության առաջնային պահպանման բարեփոխումների ծրագրին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

Որոշեցին՝

Թույլատրել տրամադրել, «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2006 թվականին իրականացված «Տնային տնտեսությունների կողմից առողջապահական ծառայությունների վրա կատարված ծախսերի վերաբերյալ» հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան Առողջության առաջնային պահպանման բարեփոխումների ծրագրին, զուտ

գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմանով:

/Անհատական/

2. «Հաշմանդամների կենսապայմանների հետազոտության» հարցաթերթը և դրա լրացման հրահանգը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ. Գևորգյան/

Որոշեցին՝

Հաստատել «Հաշմանդամների կենսապայմանների հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը»՝ համաձայն հավելվածի:

/Անհատական/

3. «ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2002թ. սեպտեմբերի 2-ի «ՀՀ բնապահպանության նախարարության «Ջրօգտագործման մասին» ձև թիվ 2-տա (ջրտնտ) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին և լրացման հրահանգին հավանություն տալու մասին» թիվ 76 արձանագրային որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ. Սարգսյան/

Որոշեցին՝

Հավանություն տալ «ՀՀ բնապահպանության նախարարության ջրօգտագործման մասին» ձև թիվ 2-տա (ջրտնտ) վարչական վիճակագրական հաշվետվության ձևում և լրացման հրահանգում կատարված փոփոխություններին և լրացումներին:

/Անհատական/

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. Հաղորդում Շվեդիայի Օրեբրո քաղաքում 03.09-07.09.2007թ.տեղի ունեցած «Գյուղացիական տնտեսությունների ռեգիստր» ծրագրի շրջանակում աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ս. Մնացականյան, Գ. Անանյան, Ա. Ավագյան, Ա. Սաֆյան, Ռ. Վարդանյան/

4.2. Հաղորդում Վրաստանի Թբիլիսի քաղաքում 04.09.2007թ. տեղի ունեցած «Սևծովյան և Կենտրոնական Ասիայի տնտեսական դիտարկումներ» ծրագրի շրջանակում կազմակերպված «Խթանիչ աշխատանք և բարեկեցություն, սոցիալ-տնտեսական

մարտահրավերները սևծովյան տարածաշրջանում» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Զ. Ավոյան/

4.3. Հաղորդում Ճապոնիայի Չիբա և Տոկիո քաղաքներում կայացած 10.07-15.09.2007թ. «Կենտրոնական Ասիայի երկրների համար պաշտոնական տնտեսական վիճակագրության հավաքագրում և վերլուծություն» թեմայով ուսումնական դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Մ. Ստեփանյան/

4.4. Հաղորդում Ճապոնիայի Չիբա և Տոկիո քաղաքներում կայացած 15.07-22.09.2007թ. «Կենտրոնական Ասիայի երկրների համար պաշտոնական տնտեսական վիճակագրության վերլուծություն, դիտարկում և տարածում» թեմայով ուսումնական դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Բ. Պողոսյան/

4.5. Հաղորդում ԱՄՆ Վաշինգտոն և Պորտլենդ քաղաքներում 17.09-28.09.2007 թ. Գյուղատնտեսության դեպարտամենտի կառուցվածքին, գյուղատնտեսությունը բնութագրող ցուցանիշների համակարգին, գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացման փորձին (օրենսդրական դաշտ, հարցաթերթեր և դրանց լրացման հրահանգներ, տվյալների հավաքագրման և մշակման համակարգչային ծրագիր, ցուցանիշների տարածում, տրամադրում, պահպանում ու արդիականացում) ծանոթանալու վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Գ. Անանյան, Ա. Ավագյան/

4.6. Հաղորդում Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 18.09-20.09 2007թ. ՄԱԿ-ի գիտության, կրթության և մշակույթի կազմակերպության (UNESCO), գիտության քաղաքականության և կայուն զարգացման բաժնի (SC/PSD), UNESCO-ի վիճակագրության ինստիտուտի, UNESCO-ի մոսկովյան գրասենյակի և ռուսական գործընկեր՝ Տնտեսագիտության պետական համալսարան-բարձրագույն դպրոցի կողմից կազմակերպված «Գիտության, տեխնոլոգիայի և նորամուծության ցուցանիշներ. միտումներ և խնդիրներ» խորագրով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Ձեկուցող՝ Ա. Կարապետյան/
Որոշեցին՝*

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումները ընդունել ի գիտություն

/Անհատական/